Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիայի տրամադրման հրապարակային պայմանագիր թիվ 13.10.2017

1 Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) սահմանում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **ԷԿԵՆԳ**) կողմից նույնականացման քարտի ընթերցման ծրագրի (այսուհետ՝ **Ծրագրի**) լիցենզիայի (այսուհետ՝ **Լիցենզիա**) տրամադրման և սպասարկման հետ կապված ծառայություններ (այսուհետ՝ **Ծառայություններ**) մատուցելու պայմանները և դրանց դիմաց վճարելու կարգը:

1.2. Պայմանագիրը հրապարակվում է ԷԿԵՆԳ-ի կայքում (www.ekeng.am) և այն կարելի է ընդունել՝ միայն Պայմանագրին ամբողջությամբ միանալով:

1.3. ԷԿԵՆԳ-ի կայքում սահմանված ակտիվացման գործողությունների հաջորդականությունը կատարելը համարվում է Պայմանագրի առաջարկի ընդունում (ակցեպտ), և այդ պահից Պայմանագիրը համարվում է կնքված ԷԿԵՆԳ-ի և Ձեր (այսուհետ՝ **Օգտագործող**) միջև:

1.4. Պայմանագրի անբաժանելի մաս են կազմում Ծրագրի համառոտ ուղեցույցը, Ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմանները և հատուկ առաջարկները, որոնք ԷԿԵՆԳ-ը կարող է ժամանակ առ ժամանակ հրապարակել իր կայքում կամ հաղորդել այլ հաղորդակցության միջոցներով, ինչպես նաև Ծառայությունների գնացուցակը:

1.5. ԷԿԵՆԳ-ի կայքի միջոցով հասանելի փաստաթղթերի թղթային տարբերակները տրամադրվում են միայն Օգտագործողի պահանջով:

1.6. Պայմանագրին միանալով՝ Օգտագործողը հավաստում է, որ ծանոթացել է Պայմանագրում և ԷԿԵՆԳ-ի կայքում սահմանված՝ Լիցենզիայի պայմաններին և օգտագործման տեխնիկական պահանջներին:

2. Լիցենզիայի պայմաններ

2.1. Պայմանագրի ներքո ԷԿԵՆԳ-ը պարտավորվում է Օգտագործողին տրամադրել Ծրագրի օգտագործման հասարակ, ոչ բացառիկ իրավունք՝ Լիցենզիա:

2.2. Յուրաքանչյուր անգամ Լիցենզիան տրամադրվում է 1 (մեկ) տարի ժամկետով:

2.3. Օգտագործողն իրավունք չունի Ծրագիրը որևէ կերպ փոփոխել կամ կրկնօրինակել:

2.4. Լիցենզիան տրամադրվում է որոշակի՝ միայն մեկ համակարգչային սարքում տեղադրելու միջոցով այն օգտագործելու իրավունքով, ակտիվացվում է տվյալ սարքի MAC հասցեի նույնականացման եզակի ցուցիչին կցելու եղանակով: Օգտագործողի կամ երրորդ անձանց մեղքով Ծրագրային փաթեթի ամբողջականության խախտման կամ կորստի դեպքում լիցենզիան չի կարող անհատույց վերականգնվել կամ փոխարինվել:

2.5. Ծրագիրը համատեղելի է միայն հետևյալ օպերացիոն համակարգերի և ծրագրերի հետ՝ Windows 7, 8, 10 (Internet Explorer, Chrome, Mozilla Firefox), որոնք պետք է լինեն թարմացված: Ծրագրի անխափան աշխատանքի համար օգտագործողը պարտավոր է նաև ապահովել իր համակարգչում տեղադրված ծրագրերի համատեղելիությունը Ծրագրի հետ և ապահովել իր համակարգչի անվտանգությունը, այդ թվում՝ հակավիրուսային ծրագրերի առկայությունը, որոնք պետք է լինեն թարմացված: ԷԿԵՆԳ-ը պատասխանատու չէ Ծրագրի խափանումների կամ առաջացած այլ տեխնիկական խնդիրների համար և չի պարտավորվում տեխնիկական աջակցություն ցուցաբերել Օգտագործողին, եթե Օգտագործողը չի պահպանել նշված կանոնները:

2.6. Լիցենզիան անհատույց չի փոխարինվում կամ վերակագնվում նաև Օգտագործողի համակարգչի կորստի, վնասվելու կամ փոխվելու դեպքում:

2.7. Օգտագործողը սույնով պատշաճ ծանուցված է համարվում առ այն, որ Օգտագործողի որոշակի համակարգչային սարքում Ծրագիրը տեղադրելու և այն ակտիվացնելու պահից ԷԿԵՆԳ-ը չի պարտավորվում իրականացնել Լիցենզիայի տեղափոխություն մեկ այլ համակարգչային սարքում: Ցանկացած այլ սարքում Ծրագիրը տեղադրելու և ակտիվացնելու նպատակով Օգտագործողը պետք է ձեռք բերի նոր Լիցենզիա՝ կատարելով տվյալ պահին գործող գնացուցակով սահմանված վճարումը:

2.8. Սույն Պայմանագրով Օգտագործողին չեն փոխանցվում Ծրագրի նկատմամբ բացառիկ գույքային իրավունքները:

2.9. Ծրագիրն օգտագործելու համար Օգտագործողը պետք է ապահովի Ծրագրի համառոտ ուղեցույցով սահմանված և ԷԿԵՆԳ-ի կողմից այլ կերպ հրապարակված նվազագույն տեխնիկական պահանջները, որոնց չապահովման դեպքում Ծրագրի օգտագործման անհնարինության դեպքում ԷԿԵՆԳ-ը որևէ պատասխանատվություն չի կրում:

2.10. Ծրագրի օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Օգտագործողը, և ԷԿԵՆԳ-ը պատասխանատվություն չի կրում դրա օգտագործման հետևանքով Օգտագործողի կամ երրորդ անձանց կրած վնասների համար, եթե այդ վնասը չի պատճառվել ԷԿԵՆԳ-ի մեղքով:

3. Սպասարկում

3.1. ԷԿԵՆԳ-ը Ծրագրի օգտագործման հետ կապված հարցերով Օգտագործողներին անվճար սպասարկում է հեռախոսային կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Ծրագրի օգտագործմանն առնչվող հարցերի և խնդիրների հեռախոսային սպասարկման ծառայությունը մատուցվում է աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-ից 17:00-ը:

3.2. Առաջացած տեխնիկական խնդիրները, որպես կանոն, լուծվում են 1-ից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ կախված խնդրի բարդությունից:

3.3. Ծրագրի թարմացումների կամ փոփոխությունների մասին ԷԿԵՆԳ-ն Օգտագործողին տեղեկացնում է իր կայքի միջոցով:

4. Վճարումներ

4.1. Լիցենզիայի համար գանձնվում է տարեկան վճար՝ կանխավճարային սկզբունքով: Յուրաքանչյուր հաջորդ վճարումը կատարվում է նախորդ վճարումից հետո՝ ոչ ուշ, քան մինչև 12-րդ ամսվա ավարտը: Ընդ որում Օգտագործողն ԷԿԵՆԳ-ին պետք է նույն ժամկետում հայտնի հաջորդ տարվա համար Լիցենզիան երկարացնելու անհրաժեշտության մասին:

4.2. Լիցենզիայի ձեռքբերման գնացուցակը հրապարակված է ԷԿԵՆԳ-ի կայքում:

4.3. Վճարումը կատարելուց և վճարման կտրոնն ԷԿԵՆԳ-ին ներկայացնելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ԷԿԵՆԳ-ն Օգտագործողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է Ծրագրի թեստային տարբերակը, որը Օգտագործողը կարող է անվճար օգտագործել 10 (տասը) օրացուցային օր, որի ընթացքում Լիցենզիայի գնման նպատակով Օգտագործողը ԷԿԵՆԳ-ի cssupport@ekeng.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է Լիցենզիայի ակտիվացման էլեկտրոնային բանալին:

4.4. Սույն պայմանագրի 4.3 ենթակետով սահմանված ժամկետում Լիցենզիայի ակտիվացման էլեկտրոնային բանալին ստանալու դեպքում ԷԿԵՆԳ-ը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Օգտագործողին տրամադրում է հարկային հաշիվ, որի մեջ նշված մատակարարման ամսաթվից Լիցենզիան համարվում է Օգտագործողին տրված, և դրա ժամկետն սկսվում է հաշվարկվել:

5. Ծանուցումներ

5.1. Համապատասխան տեղեկատվությունն ԷԿԵՆԳ-ի կայքում հրապարակելը համարվում է պատշաճ ծանուցում:

5.2. Պայմանագրի շրջանակում ԷԿԵՆԳ-ի ծանուցումները համարվում են պատշաճ կարգով կատարված, եթե՝

5.2.1. հրապարակվել են ԷԿԵՆԳ-ի կայքում

5.2.2. ուղարկվել են Օգտագործողի տրամադրած էլեկտրոնային փոստի կամ Օգտագործողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին

5.2.3. ուղարկվել են փոստով՝ Օգտագործողի հաշվառման կամ նրա տրամադրած փաստացի բնակության հասցեին (իրավաբանական անձանց դեպքում՝ իրավաբանական կամ գործունեության վայրի հասցեին):

5.3. Օգտագործողն է պատասխանատվություն կրում, եթե նրա տրամադրած կապի միջոցներին ուղարկված որևէ տեղեկություն հայտնի է դառնում տվյալ կապի միջոցին հասանելիություն ունեցող երրորդ անձանց:

5.4. Պայմանագրի շրջանակում Օգտագործողի ծանուցումները պետք է լինեն գրավոր և համարվում են պատշաճ, եթե՝

5.4.1. առձեռն հանձնվել են ԷԿԵՆԳ-ի գրասենյակում

5.4.2. ուղարկվել են ԷԿԵՆԳ-ի գրասենյակ՝ փոստային առաքմամբ

5.4.3. ուղարկվել են ԷԿԵՆԳ-ի էլեկտրոնային փոստի հասցեին՝ սկանավորված գրավոր նամակի տեսքով կամ ստորագրված էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, իրաբանական գործողություններ կատարելու համար էլեկտրոնային ծանուցումը պետք է ստորագրված լինի էլեկտրոնային ստորագրությամբ:

5.5. Օգտագործողը պարտավորվում է ԷԿԵՆԳ-ին տեղեկացնել իր կապի միջոցների փոփոխության մասին: Եթե Օգտագործողն ԷԿԵՆԳ-ին չի տեղեկացրել իր կապի միջոցների փոփոխության մասին, ապա չթարմացված կապի միջոցներով ուղարկված ծանուցումները կհամարվեն պատշաճ կարգով ուղարկված:

6. Պայմանագրի փոփոխություններ

6.1. ԷԿԵՆԳ-ն իրավունք ունի Պայմանագրում, այդ թվում՝ գնացուցակում, Ծրագրի համառոտ ուղեցույցի մեջ, Ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմաններում և հատուկ առաջարկներում (եթե առկա են), միակողմանիորեն կատարել փոփոխություններ և լրացումներ՝ դրանք նախապես հրապարակելով ԷԿԵՆԳ-ի կայքում:

6.2. Պայմանագրի փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանք ԷԿԵՆԳ-ի կայքում տեղադրելուց մեկ ամիս հետո, եթե Պայմանագրի փոփոխություններով սահմանված չէ դրանց ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ: Եթե Օգտագործողը նախքան փոփոխություններն ուժի մեջ մտնելը դրանց վերաբերյալ առարկության ծանուցում չի ներկայացնում կամ դրանց ուժի մեջ մտնելուց հետո շարունակում է Ծառայություններից օգտվել, ապա համարվում է, որ ընդունում է հայտարարված փոփոխությունները: Փոփոխությունները չընդունելու դեպքում Օգտագործողն իրավունք ունի նախքան դրանց ուժի մեջ մտնելը գրավոր ծանուցմամբ լուծել Պայմանագիրը:

6.3. Օգտագործողի համար բարենպաստ փոփոխությունները կարող են կատարվել առանց նախնական ծանուցման կամ ավելի կարճ ծանուցման ժամկետով:

6.4. Օգտագործողի է պատասխանատու Պայմանագրի, գնացուցակի, Ծրագրի համառոտ ուղեցույցի, Ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմանների և հատուկ առաջարկների փոփոխություններին ծանոթանալու համար:

7. Վեճերի լուծում և օրենսդրություն

7.1. Պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը հանձնվում է ՀՀ իրավասու դատարանների լուծմանը:

7.2. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

8. Անցումային դրույթներ

8.1. Պայմանագիրը կնքվում է մինչև Օգտագործողի կողմից ձեռք բերվող վերջին Լիցենզիայի ժամկետի ավարտը:

8.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2017թ. հոկտեմբերի 13-ին:

8.3. Ուժի մեջ մտնելու ամսաթվից Պայմանագիրը փոխարինում է նախկինում հրապարակված և Օգտագործողների հետ կնքված՝ նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիայի տրամադրման հրապարակային պայմանագրին, որը նույն ամսաթվից համարվում է ուժը կորցրած: